ԱՇԱԿԵՐՏԻ ԾՆՈՂ

Ծնողը ԱՈւՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՈւՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում: Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՈւՊ-ը առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում երեխայի դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները:

ԱՈւՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը: